ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

հանրակրթության ոլորտում իրականացվող
կրթական բնույթի առարկայական մրցույթների, մրցաշարերի
և օլիմպիադաների անցկացման

Ք. Ստեփանակերտ «15» դեկտեմբերի, 2015 թ.

Սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և հանրակրթության ոլորտում իրականացվող «Կենգուրու», «Ռուսական արջուկ», «Մեղու» առարկայական մրցույթների և Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարի (այսուհետ՝ Մրցույթներ) պաշտոնական կազմակերպիչ «Այբ» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Այբ») միջև (յուրաքանչյուրն այսուհետ՝ նաև Կողմ, իսկ երկուսը միասին՝ Կողմեր):

Կարևորելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում առարկայական մրցույթների և օլիմպիադաների անցկացումը,

խթանելով աշակերտների շրջանում սովորելու հանդեպ հետաքրքրության բարձրացումը,

գիտակցելով, որ կրթական ոլորտում համագործակցությունը միանշանակ փոխշահավետ է և ազգօգուտ,

նպատակ ունենալով բարձրացնել ԼՂՀ կրթական մակարդակը և աշակերտների պատրաստվածությունը՝

Կողմերը համաձայնության եկան ներքոբերյալի վերաբերյալ:

1. Կողմերը պարտավորվում են՝

1.1. համագործակցել ԼՂՀ-ում Մրցույթների անցկացման գործում,
1.2. առավելագույնս օժանդակել և աջակցել Մրցույթների կայացմանն ու անցկացմանը,
1.3. հանրության համար ապահովել Մրցույթների մատչելիությունն ու թափանցիկությունը:

2. Նախարարության պարտավորությունն է՝

2.1. տեղեկատվական աջակցության ցուցաբերումը և արդյունքների հրապարակմանն ու մրցանակաբաշխություններին մասնակցությունը: